

խանությանց փոխհարաբերությունները՝ մյուս կողմից: Այդ կանոնակարգը սակայն չէր կարող մնալ քարացած, քանի որ Եկեղեցին ինքը ստիպված էր երբեմն տեղի տալ և երբեմն մեծ թոհչք գործել՝ նայած թե պատմական ժամանակաշրջանը ինչ էր թելադրում, այդ պատճառով էլ կանոնակարգը չդարձավ համապարփակ օրենք ողջ հայության համար:

Եղեռնից հետո, երբ հայ ժողովուրդը արտաքսվեց իր հայրենիքից և կազմվեցին Մերձավոր Արևելքի և Եվրոպայի հայահոծ գաղութները, առաջացավ Սփյուռքը, և Եկեղեցին հայտնվեց նոր իրականության առաջ: Մեծանում էր տարրալուծման վտանգը, մանավանդ որ գիտակցական ու հետևողական աշխատանքով սահմանափակվում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հնարավորությունները՝ գործելու իբրև գլուխ և կենտրոն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու: Խորհրդային համակարգում այն նույնիսկ զրկված էր իրավական անձ լինելու իրավունքից և կարծես թե ապրում էր տարերային գոյառության պայմաններում: Վիճակը բարեշրջության նշաններ ցույց տվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Այս հենքի վրա է, որ պատմությունը հատկապես բարձր պիտի գնահատի Վազգեն Ա. Կաթողիկոսի գահակալությունը: Տնտեսական և քաղաքական ծանր պայմաններում ստանձնելով Ս. Գրիգոր Լուսավորչի գահի 130-րդ գահակալի պատվավոր պատասխանատվությունը, Վազգեն Ա. Վեհափառը եղավ այն իմաստուն կաթողիկոսը, որ հետզհետե, աննշմարելի հետևողականությամբ շունչ տվեց Եկեղեցու կյանքին՝ ճնշված թոքերով առավելագույնս շնչելու կարողությամբ՝ հասնելու համար այսօրվան լիաթոք կյանքին: Գահակալության հենց սկզբից Ամենայն Հայոց Հայրապետի համար մտասևեռում եղավ ըստեղծել Հայ Եկեղեցու կանոնական դրության մի համակարգ, որ ա. արտահայտեր պատմական իրավիճակը, բ. առավելագույնս նպաստեր Եկեղեցու միասնական կյանքին և գ. ընդունելի լիներ նվիրապետական բոլոր Աթոռների կողմից: Դժբախտաբար սակայն իրադարձություններն ու տարամետ ձգտումները Եկեղեցուն պարտադրեցին Եկեղեցուն անհարիր պայմաններ և անհնար եղավ իրականացնել այդ նվիրական առաքելությունը: Սակայն Վեհափառը մտահոգ էր Եկեղեցու գոնե ներքին կյանքի կազմակերպումով, մանավանդ Խորհրդային Միության տարածքի վրա գտնվող երկրներում:

Բացվեց հույսի արշալույսը և ազգային հոգևոր ու քաղաքական զարթոնքի ալիքի վրա հետզհետե ուրվագծվում էր անկախ Հայաստանի պատկերը: Ժողովուրդը անհագ ծարավ ուներ վերադառնալու դեպի իր արմատները: Իսկ վերադարձի ճամփան անցնում էր նախ և առաջ Եկեղեցու միջով: Եկեղեցին հայտնվեց եռանդուն և համակարգված գործունեության հրամայականի առջև: Եվ ահա Վեհափառ Հայրապետի կողմից նշանակված հանձնաժողովը սրտեռանդ աշխատանքով մարմին տվեց «Հայաստանի Հանրապետության և Ներքին Սփյուռքի տարածքի վրա գործող Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու» Կանոնադրության: Այն հիմնվեց Եկեղեցու ավանդության և Հայաստանի հանրապետության ընդունած «խղճի ազատության մասին» օրենքի վրա, որով և Եկեղեցին ճանաչվում էր իբրև իրավական անձ: Եվ բազմակի քննարկումներից հետո ստեղծվեց ընդունելի այն տարբերակը, որը վավերացվեց Ամենայն Հայոց Հայրապետի բարձր տնօրինությամբ: Այն կիրառության մեջ է դրվում երեք տարվա փորձաշրջանով, որովհետև նոր պայմանները անպայմանորեն կթելադրեն փոփոխություններ:

Կատարված է ամենակարևոր քայլը, կա հիմքը, որի վրա հավատացած ենք, շուտով պետք է կառուցվի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ընդհանրական կանոնադրությունը: Այսօր, երբ Հայաստանը անկախ հանրապետություն է, վերացած են Հայրենիքի և Սփյուռքի միջև ամենալայն և ազատ հարաբերությունների նախկին վարչակարգով պայմանավորված արգելքները, երբ առաջնային հրամայական է դարձել «մեկ ազգ, մեկ Եկեղեցի» տեսլականը, ավելի քան անհրաժեշտ է դառնում կյանքի կոչել Հայ Եկեղեցու ամբողջ կառույցի նվիրապետությունն ու գործունեությունը կանոնակարգող մի **ընդհանրական կանոնադրություն**՝ մեր օրերի պայմաններին ու պահանջներին համապատասխան:

Հուսանք, հավատանք ու մաղթենք, որ այս նոր կանոնադրությունը նույնպես կտնօրինի Ամենայն Հայոց Վազգեն Ա Հայրապետը:

